

ՀՀ ԼՈՐՈՒՒ ՄԱՐԶԻ «ՏԱՇԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ_Ն
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ Է ՄՐՑՈՒՅԹ ԻՄՈՒՆՈԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱԲԻՆԵՏԻ
ԲՈՒԺՔՐՈՋ (0,75 ԴՐՈՒՅՔԱԶԱՓ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Մրցույթը կկայանա մեկ փուլով:

Մրցույթին մասնակցելու համար անձը աշխատանքային խմբին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի խմբի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է,
2. Փաստաթուղթ՝ պետական նմուշի դիպլոմ միջնակարգ-մասնագիտական կրթության մասին,
3. Անձնագրի պատճենը, հանրային ծառայության համարանիշը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները՝ դրանց առկայության դեպքում,

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի:

Պարտադիր պայմաններն են՝

- Միջին-մասնագիտական կրթության առկայություն,
- Բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Լրացուցիչ պայմաններն են՝

- Համակարգչով աշխատելու ունակություն,
- Վերջին հինգ տարում մասնագիտական աշխատանքի կամ վերապատրաստման առկայություն,
- Տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ՝ անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից, «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքում՝ Լոռու մարզ, ք. Տաշիր, Գրիբոյեդովի 3 հասցեում:

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 23-ին՝ ժամը 12-ին, «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքում: Հեռ.՝ (0254) 4-21-16: